

Ց Ա Ն Կ

ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆԸ (18 ՏԱՐԵԿԱՆ ԵՎ ԲԱՐՁՐ ՏԱՐԻՔԻ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ)  
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԱՆՎՃԱՐ ՀԻՎԱՆԴԱՆՈՑԱՅԻՆ  
ԱՆՀԵՏԱԶԳԵԼԻ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՊԱՀԱՆՋՈՂ  
ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՎԻՃԱԿՆԵՐԻ

1. Վերակենդանացման միջոցառումներ և ինտենսիվ թերապիա պահանջող հիվանդություններ և վիճակներ՝
  - 1) շոկային վիճակներ, 2-րդ և ավելի աստիճանի,
  - 2) կոմատոզ վիճակներ,
  - 3) դիաբետիկ հիպոգլիկեմիկ կոմա (1 օրվա գնով),
  - 4) սուր շնչական անբավարարություն 2-րդ աստիճանի և բարձր,
  - 5) սրտի փորոքների ֆիբրիլյացիա և թրթռոց /տախիսիստոլիկ ձև/, սրտի կանգ,
  - 6) էկզոգեն թունավորումներ (ալկոհոլային՝ 1 օրվա գնով, կենդանիների խայթոցից, դեղորայքային և քիմիական նյութերով թունավորումներ),
  - 7) էպիլեպտիկ ստատուս, գիտակցության կորստով,
  - 8) ծանր աստիճանի պրեէկլամպսիա և էկլամպսիա,
  - 9) տարբեր տեսակի էմբոլիաներ, հեմոլիզ, լյարդի ֆերմենտների բարձրացում, «թրոմբոցիտների քանակի իջեցում» համախտանիշ,
  - 10) սրտամկանի սուր ինֆարկտ,
  - 11) ինսուլտ (հեմոռագիկ, իշեմիկ),
  - 12) պոլիտրավմա (խոշոր ոսկրերի և/կամ ներքին օրգանների համակցված վնասվածքներ),
  - 13) ցրտահարություն՝ 3-րդ աստիճանի:
2. Այլ հիվանդություններ և վիճակներ՝
  - 1) հոգեշարժական գրգռված վիճակներ,
  - 2) ցնորագառանցանքային սուր վիճակներ,

- 3) սուր աֆեկտիվ վիճակներ, փսիխոզներ,
- 4) քրոնիկ հոգեկան հիվանդների խնամք,
- 5) օնկոհեմատոլոգիական հիվանդություններ (արյունաստեղծ հյուսվածքների չարորակ նորագոյացություններ),

6) հեմոֆիլիա,

7) ապլաստիկ անեմիա,

8) միելոդիսպլաստիկ համախտանիշ:

3. Վարակիչ հիվանդություններ՝

1) ժանտախտ,

2) տուլարեմիա,

3) սիբիրախտ,

4) դիֆթերիա,

5) կապույտ հազ և հարկապույտ հազ,

6) փայտացում,

7) սուր պոլիոմիելիտ, սուր թորշոմած կաթվածահարություն,

8) կատաղություն,

9) բժավոր տիֆ (էպիդեմիկ),

10) մալարիա,

11) Մարդու իմունային անբավարարության վիրուս/Ձեռքբերովի իմունային անբավարարության համախտանիշ (ՄԻԱՎ/ ՁԻԱՀ),

12) թռչնագրիպ,

13) վիրուսի նոր լոգոտիպով հարուցված գրիպ,

14) հպավարանցիկ հեմոռագիկ տենդեր,

15) բոտուլիզմ,

16) քուրեշ (բարդացած ձևերը),

17) մենինգոկոկային վարակ,

18) առաջնային սուր մենինգիտներ,

19) այլ բակտերիային հիվանդություններ,

20) ջրծաղիկ (բարդացած ձևերը),

21) կարմրուկ (բարդացած ձևերը),

22) կարմրախտ (բարդացած ձևերը),

- 23) սուր վիրուսային հեպատիտներ,
- 24) համաճարակային պարոտիտ (բարդացած ձևերը),
- 25) վարակային մոնոնուկլեոզ,
- 26) առաջնակի սուր բրուցելոզ,
- 27) գրիպ (Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կողմից համաճարակի հայտարարման կամ բռնկումների դեպքում),
- 28) խոլերա,
- 29) որովայնային տիֆ և պարատիֆ,
- 30) այլ սալմոնելոզային վարակներ,
- 31) շիգելյոզ,
- 32) չճշտված ծագումնաբանությամբ և այլ բակտերիալ ու վիրուսային սուր աղիքային հիվանդություններ,
- 33) տուբերկուլոզի բոլոր ձևերը, այդ թվում՝ հիվանդ և կոնտակտավոր երեխաների առողջարանային բուժում:

Հավելված N 2  
ՀՀ առողջապահության նախարարի  
2013 թվականի հոկտեմբերի 18-ի  
N 65-Ն հրամանի

#### Ց Ա Ն Կ

ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆԸ (ՄԻՆՉԵՎ 18 ՏԱՐԵԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ) ՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿՈՂՄԻՑ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԱՆՎՃԱՐ ՀԻՎԱՆԴԱՆՈՑԱՅԻՆ ԱՆՀԵՏԱԶԳԵԼԻ  
ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՊԱՀԱՆՋՈՂ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ  
ՎԻՃԱԿՆԵՐԻ

1. Վերակենդանացման միջոցառումներ և ինտենսիվ թերապիա պահանջող հիվանդություններ և վիճակներ՝

- 1) շոկային վիճակներ 2-րդ և ավելի աստիճանի,
- 2) կոմատոզ վիճակներ,

3) սուր շնչական անբավարարություն 2-րդ աստիճանի և բարձր (թթվածնի ճնշում 50 միլիմետր սնդիկի սյուն և պակաս, կամ Hb-ի հագեցվածությունը թթվածնով 80 տոկոս և պակաս),

4) ասֆիքսիա,

5) սրտի կանգ,

6) ցնցումային համախտանիշ գիտակցության կորստով,

7) անուրիա,

8) շնչառության կանգ,

9) էկզոգեն թունավորումներ (կենդանիների խայթոց, դեղորայքային և քիմիական նյութերով թունավորումներ),

10) պոլիտրավմա (խոշոր ոսկրերի և/կամ ներքին օրգանների համակցված վնասվածքներ):

2. Անհետաձգելի բժշկական օգնություն պահանջող վիճակներ և հիվանդություններ՝

1) սուր սրտային և/կամ անոթային անբավարարություն,

2) սուր երիկամային անբավարարություն,

3) շնչական անբավարարություն 1-ին և 2-րդ աստիճանի,

4) հիպերտոնիկ կրիզ,

5) ցնցումային համախտանիշ,

6) ասթմատիկ վիճակ,

7) կվինկեի այտուց,

8) սրտի ռիթմի խորը խանգարումներ (սպառնացող բրադիկարդիա, պարոքսիզմալ տախիկարդիա, սպառնացող առիթմիաներ),

9) սրտի սուր բորբոքային հիվանդություններ (միոկարդիտ, պերիկարդիտ, էնդոկարդիտ),

10) սրտի կապույտ բնածին արատ, խոր հիպոքսեմիայով (80 տոկոս և ցածր),

11) շարակցական հյուսվածքի դիֆուզ հիվանդություններ (կոլագենոզներ) ակտիվ փուլում,

12) սուր արթրիտներ և խրոնիկական արթրիտների սրացում,

13) սուր հեմոլիտիկ կրիզներ, սակավարյունություն (հեմոգլոբին 60 գրամ/լիտր և ցածր կամ էրիթրոցիտների քանակը=1.7x 10<sup>12</sup>/լիտր և պակաս),

- 14) սուր մենինգիտներ, էնցեֆալիտներ, միելիտներ,
- 15) Գիյեն-Բարեի սուր պոլիոէնցեֆալոմիալ կաթվածի զարգացումով,
- 16) սուր պարապրոկտիտ,
- 17) երիկամային խիթ,
- 18) սուր փոշտ (ամորձու ոլորում, ամորձու հավելման ոլորում, էպիդիդիմորխիտ ամորձու հավելման հիդատիդի մեռուկացում),
- 19) պրեկոմատոզ և կրիզային վիճակներ (պայմանավորված հորմոնալ անբավարարությամբ),
- 20) սուր գլոմերուլոնեֆրիտ, պիելոնեֆրիտ,
- 21) ցանցաթաղանթի անոթների սուր անանցանելիություն, ներակնային արյունազեղումներ,
- 22) ակնազնդի և հավելվածների վնասվածքներ, ակնազնդի ամբողջականությունը խախտող վիճակներ, գլաուկոմայի սուր նոպա (ներակնային ճնշումը 40 միլիմետր սնդիկի սյուն և ավելի),
- 23) ներակնակապիճային բարդություններ (ցելյուլիտ),
- 24) սուր մաստոիդիտ, անտրիտ,
- 25) կոխլեար – վեստիբուլյար ֆունկցիայի սուր խանգարում,
- 26) սուր մեդիաստենիտ,
- 27) շնչափողի, կերակրափողի սուր ստենոզներ,
- 28) թրոմբոզներ, էմբոլիաներ,
- 29) մեխանիկական դեղնուկ,
- 30) օտար մարմին՝ տարբեր տեղակայման,
- 31) ոսկրերի կոտրվածքներ՝ բեկորների տեղաշարժով,
- 32) վերջույթների և դրանց սեզմենտների, առանձին օրգանների լրիվ և ոչ լրիվ ամպուտացիաներ,
- 33) արտաքին և ներքին (երակային և զարկերակային) արյունահոսություններ, տարածուն հեմատոմաներ, ներանոթային տարածուն մակարդման (ԴՎՍ) համախտանիշ,
- 34) երկարատև ճնշման (կրաշ) համախտանիշ,
- 35) հրազենային և թափածակող վնասվածքներ,
- 36) նյարդերի, ջլերի և հողերի բաց վնասվածքներ,

37) գանգուղեղային (ուղեղի ցնցում, սալջարդ) և ողնաշարի (ողնուղեղի) վնասվածքներ,

38) օրգանի կամ հյուսվածքի գանգրենա,

39) ներքին օրգանների արքցեսներ,

40) խոռոչավոր օրգանների թափաձակում,

41) էփինոկոկոզ՝ բարդացած արքցեսով կամ պատռվածքով,

42) սուր որովայն՝ սուր պանկրեատիտ, սուր ապենդիցիտ, պերիտոնիտ,

43) աղիների սուր անանցանելիություն,

44) օղակված ճողվածք,

45) լորձաթաղանթի ջերմային և քիմիական այրվածքներ,

46) մարմնի արտաքին ծածկույթի այրվածքներ՝

ա. 1-ին աստճան՝ մարմնի 20 տոկոս մակերեսով և ավելի,

բ. 2-րդ աստճան՝ մարմնի 5 տոկոս մակերեսով և ավելի,

գ. 3-րդ, 4-րդ աստճաններ՝ մարմնի 0.5 տոկոս մակերեսով և ավելի,

47) ցրտահարություն՝ 1-ին, 2-րդ, 3-րդ աստճանների,

48) պարբերական հիվանդության նոպա,

49) սուր սեպտիկ վիճակներ,

50) հետպատվաստումային անբարեհաջող դեպքեր (ռեակցիաներ և բարդություններ),

51) թոքաբորբ, առաջացած գրիպի վարակի հետևանքով (գործում է մինչև առողջապահության բնագավառի լիազոր մարմնի կողմից յուրաքանչյուր տարի ընդունվող հրամանով սահմանված ժամկետը),

52) պատանեկան արյունահոսություններ,

53) ձվարանի ապոպլեքսիա,

54) բշտիկային զանգված, խորիոնէպիթելիոմա,

55) արգանդային արյունահոսություններ տարբեր էթիոլոգիաների (արգանդի միոմա, պոլիպ, պոլիպոզ, արտաքին սեռական օրգանների և հեշտոցի պատերի վնասվածքներ),

56) միոմատոզ հանգույցի, ձվարանի ուռուցքների, ուռուցքանման և թարախային գոյացությունների տոտիկի ոլորում, պատյանի պատռում, հանգույցի նեկրոզ, ծնվող ենթալորձային միոմատոզ հանգույց,

57) վերջույթների և դրանց սեզմենտների, առանձին օրգանների լրիվ և ոչ լրիվ անդամահատումներ:

3. Այլ հիվանդություններ և վիճակներ՝

1) հոգեշարժական գրգռված վիճակներ,

2) ցնորազառանցանքային սուր վիճակներ,

3) սուր աֆեկտիվ վիճակներ, փսիխոզներ,

4) քրոնիկ հոգեկան հիվանդների խնամք,

5) օրգան համակարգերի ախտորոշված չարորակ նորագոյացություններ

6) օնկոհեմատոլոգիական հիվանդություններ (արյունաստեղծ հյուսվածքների չարորակ նորագոյացություններ),

7) հեմոֆիլիա,

8) ապլաստիկ անեմիա,

9) միելոդիսպլաստիկ համախտանիշ:

4. Վարակիչ հիվանդություններ՝

1) ժանտախտ,

2) տուլարեմիա,

3) սիբիրախտ,

4) դիֆթերիա,

5) կապույտ հազ և հարկապույտ հազ,

6) փայտացում,

7) սուր պոլիոմիելիտ, սուր թորշոմած կաթվածահարություններ,

8) կատաղություն,

9) բժավոր տիֆ (էպիդեմիկ),

10) մալարիա,

11) Մարդու իմունային անբավարարության վիրուս/Ձեռքբերովի իմունային անբավարարության համախտանիշ (ՄԻԱՎ/ ՁԻԱՀ),

12) թռչնագրիպ,

13) վիրուսի նոր լոգոտիպով հարուցված գրիպ,

14) հպավարանցիկ հեմոռագիկ տենդեր,

15) բոտուլիզմ,

16) քուրեշ (բարդացած ձևերը),

- 17) մենինգոկոկային վարակ,
- 18) առաջնային սուր մենինգիտներ,
- 19) այլ բակտերիային հիվանդություններ,
- 20) ջրծաղիկ (բարդացած ձևերը),
- 21) կարմրուկ (բարդացած ձևերը),
- 22) կարմրախտ (բարդացած ձևերը),
- 23) սուր վիրուսային հեպատիտներ,
- 24) համաճարակային պարոտիտ (բարդացած ձևերը),
- 25) վարակային մոնոնուկլեոզ,
- 26) առաջնակի սուր բրուցելոզ,
- 27) գրիպ (Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կողմից համաճարակի հայտարարման կամ բռնկումների դեպքում),
- 28) խոլերա,
- 29) որովայնային տիֆ և պարատիֆ,
- 30) այլ սալմոնելոզային վարակներ,
- 31) շիգելյոզ,
- 32) չճշտված ծագումնաբանությամբ և այլ բակտերիալ ու վիրուսային սուր աղիքային հիվանդություններ,
- 33) տուբերկուլոզի բոլոր ձևերը, այդ թվում՝ հիվանդ և կոնտակտավոր երեխաների առողջարանային բուժում:

5. Սեռական ճանապարհով փոխանցվող և մաշկային հիվանդությունների բժշկական օգնության ծառայություններ՝

- 1) սիֆիլիսի բոլոր ձևերը,
- 2) միկրոսպորիա և տրիխոֆիթիա,
- 3) պսորիատիկ էրիթրոդերմիա և արթրոպատիա,
- 4) բշտային մաշկախտեր: